# ՀԱՇԻՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

## ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

**1914 Թ.**

ԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ընկերութեան հասցէն՝ Петхаинская ул. № 3.

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ՊՐՈԳՐԵՍ", ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ ՓՈՂ., № 1.
1915

13853

13853

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան ընդհանուր ժողովի կայացած 1914 թւի սեպտեմբերի 28-ին։

*Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան 1914 թւի սեպտեմբերի 28-ին Ընդ. Ժողովը լինելով երրորդը՝ ըստ կանոնադրութեան 39 երորդ կէտի համարւեց օրինաւոր։*

*Ընկ. Նախագահ օր. Ս. Բայսողլեան բաց արեց ժողովը 27 իսկական անդամուհիների ներկայութեամբ ժամի 1½-ին, ու առաջարկեց ընտրել ժողովի Նախագահ և քարտուղար։ Միաձայն ընտրւեցին ժողովի Նախագահ տ. Ե. Ցարութիւնեան, քարտուղար Ս. Պետրոսեան։*

*Զբաղմունքի առարկաները հետևեալն էին.*

*1. 1913 թւի մայիսի 5-ի արձանագրութեան ընթերցումը։*
*2. Նոյն թւի ընկերութեան գործունէութեան ընթերցումը։*
*3. » » հաշւիների—նախահաշւի ընթերցումը։*
*4. » » ընթացիկ հարցեր։*
*5. » » հերթական կարգով դուրս գնացող անդամների, փոխ-անդամների և վերստուգիչ անդամների ընտրութիւնները։*

*Վարչութեան անդամ տ. Ս. Պետրոսեան կարդաց 1913 թւի մայիսի 5-ի արձանագրութիւնը, ընկերութեան գործունէութեան տեղեկագիրը, հաշիւը և 1914 թւի նախահաշիւը, որոնք ընդունւեցին և հաստատւեցին Ընդ. Ժողովի կողմից առանց առարկութիւնների և անփոփոխ։*

*Դրանից յետոյ տ. Ե. Յարութիւնեան նախ քան ընթացիկ հարցերին անցնելը՝ ցանկութիւն յայտնեց ծանօթանալու ընդ. հարցերի հետ։ Ընկ. Նախագահը ծանուցեց, որ Վարչութիւնս ըստ կարելոյն օգտակար հանդիսանալու համար՝ պատերազմից առաջ եկող աղէտներից գոնեա փոքրագոյնին, որոշեց ընդ առաջ գնալ Քաղաքային Կենտրոնական Կոմիտէի կոչին, ընդունելով որբանոցի յարկի տակ պահեստի հայ զինւորների երեխաներից 5-ին առանց վճակի և անվճար, (սակայն համապատասխանող կանոնադրութեանս)։*

Բացի այդ որոշեց նաև ընդունել նոյն երեխաներից աննշան վճարով առանց վիճակի։ Ընդ. Ժողովը ունկնդրելով այդ ծանուցմանը, և զգալով պահանջի այժմէական անհրաժեշտութիւնը, լիովին հաւանութիւնը տւեց Վարչութեան որոշմանը։ Ապա անցաւ ընթացիկ հարցերին.

Վարչութիւնը զեկուցեց, որ որբերից 3 տղաներին տեղաւորել է առանձին ընտանիքում, (անյարմար գտնելով հասակը մեծանալուց յետոյ պահել որբանոցում), նաև արծարծեց որբ Թամարա Բաղչեանի հարցը։ Ընդգծեց այն հանգամանքը, որ Թամարա Բաղչեանը, որ մինչև օրս ապրում էր վճարով, այլևս հնարաւորութիւն չունի ներմուծելու այդ վճարը շնորհիւ իր բարեկամների ներկայ աննպաստ պայմանների, ուստի խնդրում է ազատել, և մինչև գիմնազիան աւարտելը պահել անվճար։ Բարեկամները խոստանում են հոգալ հագուստի և դասական պիտոյքների ծախքը։

Ընկ. Նախագահը հարցնում է Ընդ. Ժողովի կարծիքը այդ հարցի նկատմամբ, աւելացնելով. որ նա գտնում է VII դասարանը։

Օր. Լիանոզեան գտնում է. որ պէտք է յարգել Թ. Բաղչեանի և նրա բարեկամների խնդիրը՝ Թոյլ տալ շարունակելու մինչև աւարտելը։

Օր. Նալբանդեան խնդրում է այդ և առհասարակ նման հարցերին տալ սկզբունքային բնոյթ՝ ու չսահմանափակւել միայն մէկով, քանի որ այդ չի կարող լինել առաջինը կամ վերջինը։

Օր. Բայտողլեան ասում է որ այդպիսի դէպքերը յաճախ կրկնւել չեն կարող. քանի որ միջնակարգ դպրոց տալիս ենք միմիայն նրանց, որոնք աչքի են ընկնում իրանց առանձնայատուկ ընդունակութիւններով. բացի այդ ըստ մեր կանոնադրութեան 17 տարին լրանալուց յետոյ իրաւունք չունինք պահել որբանոցում և պատսպարել. այս մի բացառիկ դէպք է։ 17 տարին լրանալուց յետոյ մենք յանձնարարում ենք իրենց բարեկամներից մէկին, նամակի միջոցաւ տեղեկացնելով նրանց, ինչպէս և վարւել ենք Լուսիկ Արշալոյսեանի վերաբերեալ։ Լսելով, որ նա ունի ունևոր բարեկամներ, մենք արդէն դիմում ենք արել, իսկ այս դէպքում՝ երբ բարեկամները ոչ մի միջոց չունեն, ինչ կերպ վարւել որբ Թամարա Բաղչեանի վերաբերմամբ, կարծում եմ պէտք է զիջել,

Օր. Նալբանդեան. այդ այդպէս լինելով հանդերձ, դուք միշտ կը հանդիպէք Թիւրիմացութիւնների՝ եթէ չորոշէք, չպարզաբանէք այդ հարցը, քանի որ երբ ուսման աւարտման հարցն է շօշափւում, որով և լուծւում է ապագայ բարօրութեան խնդիրը, այդտեղ տարիքի առԹիւ խօսք անգամ ասելը, առարկելը անարդարացի է, պէտք է Թոյլ տալ ապրելու որբանոցում և վերջացնելու սկսածը։

Տ. Խոսրովեան. ես այն համոզմանն եմ, որ այդպիսի դէպքեր հազիւ թէ կրկնւի, այնպէս որ Թ. Բաղչեանի խնդիրը պէտք է բացառիկ համարել և զիջել։

Տ. Ե. Յարութիւնեանը ասում է, որ այդ դէպքը միակ համարել չի կարելի, գտնում է աւելի քան հաւանական, որ նոյնը կարող է կրկնւել շատ անգամ. այդ անխուսափելի է, ուստի համամիտ լինելով օր. Նալբանդեանի յայտնած մտքերի հետ, տալիս է, իր հաւանութիւնը նրա առաջարկութեան։

Օր. Նալբանդեան. ցանկալի էր մինչև ուսման աւարտելը ուշադրութիւն չդարձնել տարիքի վրայ, և այդ կէտը զետեղւէր կանոնադրութեան մէջ, որպէսզի խոչնդոտ չհանդիսանար։

Տ. Ե. Յարութիւնեան գտնում է, որ առ այժմս վերջնական վճիռ կայացնել այդ առԹիւ անհնար է, նախ քան մանրազնին քննութեան ենթարկելը, բարւօք է համարում յետաձգել, իսկ հիմա կարելի է ծանօԹանալ կանոնադրութեան այն կէտի հետ, որտեղ յիշւում է որբերի տարիքի մասին։

Կանոնադրութեան ընթերցումը պարզեց, որ որբերը խնամւում են և պահւում որբանոցում մինչև 17 տարին։

Տ. Իւզբաշեան հարց է տալիս թէ ինչպէս կըվարւեն այն դէպքում, երբ 17 տարին լրացած որբի համար երևան չեն գալիս որևէ խնամակալ բարեկամ։

Օր. Նալբանդեան—ահա իմ ասելիքս էլ հէնց այդ է, որ եթէ այդ սկզբունքային հարց չդարձնէք՝ ու չզետեղէք կանոնադրութեան մէջ, կըհանդիպէք բարդութիւնների, մանաւանդ երբ փոխւելով Ձեր ներկայ կազմը՝ առաջ գան այլ անձինք, տարբեր համոզումներով և հայեացքներով։

Տ. Խօջամիրեան—ես նոյնպէս գալիս եմ հաստատելու այն պարզ փաստը, որ պէտք է ստեղծել հնարաւորութիւն, որ որբերը վերջացնեն սկսածը, այսինքն աւարտեն արհեստը թէ ուսումը, առհասարակ այն, որին ձեռնամուխ են եղել։

Տ. Ե. Յարութիւնեան. որպէսզի տարաձայնութիւնների տեղի

չտանք, կը առաջարկէի Ընդ. Ժողովին պարզաբանելու այդ հարցը ըստ կարելոյն, ու մի կէտի հանգելու։

Այդ հարցի շուրջը եղան մտքերի փոխանակութիւններ, որից յետոյ տ. Ն. Յարութիւնեան եզրափակեց ասելով, որ թէև կանոնադրութեան մէջ չի որոշւում թէ ինչ դպրոցներ յաճախեն, բայց և այնպէս ցանկալի է, որ սկսած գործը ունենայ նպատակաւոր վերջաւորութիւն և լուծում։ Որբերից, աղջկերանց մանաւանդ, որոնց աւելի դիւրին է պահել որբանոցում, պէտք է անպայման թոյլ տալ աւարտելու, թէև ի հարկէ նոյն կերպ պէտք է և վարուել որբ տղայոց վերաբերմամբ։

Ի վերջոյ Ընդ. Ժողովը որոշեց 1) չմերժել որբ Թ. Բաղչեանի բարեկամների խնդիրը, պահելով անվճար մինչև աւարտելը, միայն որ նրանք հոգան հագուստեղէնի և դասական պիտոյքների ծախքը։ 2) փոփոխութեան ենթարկել կանոնադրութեան 8-երորդ կէտը տարիքի վերաբերեալ, նաև 39-երորդը Ընդ. Ժողովին վերաբերւող. այնպէս որ առաջին անգամ հրաւիրած Ընդ. Ժողովը համարւի կանոնաւոր, ոչ այն դէպքում՝ երբ ներկայ են անդամների $^1/_2$-ը՝ այլ երբ ներկայ գտնւեն $^1/_4$-ը, մի քանի այլ կէտերի հետ երբ հնարաւորութիւն ստեղծւի։

3) Որոշւեց աւելացնել 1914 թւի նախահաշիւը այնքանով, որքան կը պահանջւի ծախք նոր ընդունւած 5 որբի համար, (պահեստի հայ զինւորների երեխաների) որ չէր նախատեսնւած նախահաշիւը կազմելիս։

Ապա Ժողովն անցաւ ընտրութիւններին։

Ընդ. Նախագահը առաջարկեց երկու նոր անդամով աւելացնել Ընկ. Վարչ. կազմը, բացի նախկին 9 վարչ. անդամները։ Հերթական կարգով դուրս գնացող Վարչական անդամ. տ. Նինա Ալիբէգեան, տ. Սաթենիկ Խօջամիրեան, տ. Սօֆիա Գէորգեան միաձայն վերընտրւեցին. նոր ընտրւեցին օր. Վարսենիկ Էնֆիանճեան և օր. Կատարինէ Լիանոզեան։ Ընդ. Ժողովի հաճութեամբ անփոփոխ մնացին փոխ-անդամները և Վերստուգող Յանձնաժողովի անդամները։

Ժողովը փակւեց ժամը $3^1/_2$-ին։

Նախագահ Ընդհանուր Ժողովի՝ Նր. Յարութիւնեան
Քարտուղար՝ Ս. Պետրոսեան

# ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1914 ԹՒԻՆ.

Վարչութեան անդամների ժողովը իր առաջին նիստում ձեռնարկեց կազմի ընտրութիւնը. ընտրւեցին օր. Սուսաննա Բայսողոլեանը նախագահ, օր. Աննա Փուզինեանը փոխ-նախագահ. տիկ. Նունէ Պասբեանը գանձապահ և տիկ. Ռոզալեա Թադէոսեանը քարտուղար։

Գործի անցնելով վարչութիւնս 1914 թւի ընթացքում իր գործունէութիւնը կենտրոնացնում է գլխաւորապէս որբանոցի սաների կրթական և ուսումնական հարցերի շուրջը։

Ընկերութեանս կանոնադրութեան համաձայն տղայ երեխաները խնամւում են որբանոցում մինչև որոշեալ հասակը, այնուհետև Վարչութիւնս սաներից 3-ին — Մամիկոն Սարգսեանին, Աբգար Փիլիպպոսեանին և Համբարձում Աղախանեանին տեղաւորեց պ. Ա. Շահբազեանի ընտանիքում, նշանակելով իւրաքանչիւրի համար 13 ր. ամսական. սակայն վերջինին Վարչութիւնս հարկադրւած դուրս բերեց արհեստաւորաց դպրոցի ձուլարանական բաժանմունքից, որտեղ նկատւում էր խոնաւութիւնը, որ ազդում էր նորա առողջութեան վրայ. համաձայն իր ցանկութեան որոշւեց տալ նորան Սակարայի այգեգործական դպրոցը, որ գտնւում է Կվիրիլա կայարանի մօտ։ Ապրիլի 1-ին Փոխ-Նախագահ օր Ա. Փուզինեանը տարաւ Աղախանեանին յիշեալ դպրոցը, որտեղ յաջող քննութիւններ տալուց յետոյ, ընդունւեց։

Համբարձում Աղախանեանի փոխարէն պ. Շահբազեանի ընտանիքում տեղաւորեց Աւետիս Աղախանեանին։ Ընդհանուր Ժողովի որոշման համաձայն որբանոցիս սան Թամարա Բաղչեանը ազատւած է վճարից։ Անհրաժեշտ համարելով որ Ընկերութեանս Վարչութիւնը մասնակցութիւն ունենայ օրւայ մեծ կարիքներին բաւարարելու ընդհանուր աշխատանքի մէջ, նա սեպտեմբեր ամսին որբանոց ընդունեց Քաղաքային Կենտրոնական Կոմիտէի միջոցով պահեստի զինւորների ընտանիքներից 4 երեխայ ձրիաբար, որոնք են. Զարչեան Արուսեակ, Տէր-Աբրահամեան Թադուհի, Տէր-

Աւետիսեան Շողակաթ և Ղալաեան Մովսէս։ Այս երեխաները բացի վերջինից ընդունուեցին քաղաքային դպրոց, իսկ վերջինը փոքր հասակի պատճառով մնում է որբանոցում։ Վարչութիւնս ստացաւ յիշեալ կոմիտէից 4 երեխաների սկզբնական ծախսերի համար միանուագ 100 ր. դեկտեմբեր ամսին ևս ընդունուեցին երեք որբ քոյր Մաշուրեաններ ամսական 15 րուբլի վճարով իւրաքանչիւրի համար, որոնցից երկուսը նոյնպէս ընդունուեցին քաղաքային դպրոց, իսկ երրորդը, որը 5 տարեկան է, մնում է որբանոցում։

Պէտք է ասել, որ Վարչութիւնը միշտ աշխատում է տեղեակ լինել որբանոցիս սաների բարեկամների տնտեսական պայմանների և բարոյական կացութեան մասին, և այն դէպքում երբ նորանք փոխւում են դէպի լաւը այնքան, որ կարող են իրանք խնամել որբին, Վարչութիւնը ստոյգ տեղեկութիւններ հաւաքելուց յետոյ, որբին յանձնում է բարեկամներին, ահա և այդ պատճառով հաշուետուութեան տարւայ ընթացքում որբանոցիս սան Գրիգոր Բաքայեանին, որը աւարտել է քաղաքային դպրոցը, Վարչութիւնը յանձնեց նրա եղբօրը ընդ միշտ։ Ամբողջ 1914 տարւայ ընթացքում Ընկերութեանս որբանոցում խնամուել են 32 երկսեռ որբ և կիսաորբ երեխաներ, որոնք բոլորը յաճախել են քաղաքային և միջնակարգ դպրոցները, բացի երկու մանկահասակներից և Սիրանոյշ Խաչատրեանից, որին վարչութիւնը հանել է դպրոցից վատառողջութեան պատճառով։

Որբանոցիս սաները տարւայ ընթացքում մի քանի անգամ մասնակցել են մանկական ներկայացումներին և ցերեկոյթներին, որոնք կազմակերպուել են Հասարակական ակումբում. նմանապէս մասնակցել են Վարչութեան թոյլտուութեամբ զանազան էքսկուրսիաներին այն դպրոցների աշակերտ-աշակերտուհիների հետ, որտեղ իրանք սովորում են։

Տարւայ ընթացքում Վարչութիւնս ունեցել է 34 հերթական նիստ։ Վարչութիւնս մասնակցել է պ. Իսահակ Յարթուլթիւնեանի 30 ամեայ Յոբելեանին Ներսեսեան դպրոցում, Ազգային բիւրօի անդամների ընտրութեան ժողովին առաջնորդարանում, ներկայ է գտնուել Թիֆլիսի Պոլիտեխնիկումի հիմքի օծման հանդէսին։ Նաև մասնակցել է Քաղաքային Կենտրոնական Կոմիտէի աշխատանքներին, ուր Վարչութիւնս ունեցել է իբրև ներկայացուցիչ տ. Նունէ Ալիբէկեանին։ Ընկերութեանս դրամական միջոցները բարելաւելու համար վարչութիւնը կազմակերպել է մայիսի 9-ին զբօսանք, որը վատ եղանակի պատճառով զուտ արդիւնք տուեց ընդամենը 332 ր. 29 կ., իսկ սովորական ներկայացումը Վարչութիւնը անյարմար գտաւ կազմակերպել պատերազմի շնորհիւ ստեղծած աննպաստ պայմանների պատճառով։ Սակայն այդ բացը մասամբ ծածկւեց Վարչութեան անդամների և մի քանի այլ անձերի աշխատութեամբ զանազան նուէրներով, որից գոյացաւ ընդամենը 342 ր. 70 կ.։



Այս գումարը ստացւեց հետևեալ անձերից։

Տիկ. Ն. Ալիբեկեանը նւիրեց մի ոսկէ մատանի, տիկ. Մ. Ա. Թումանեանը—ոսկէ ապարանջան, Ջ. Էնիկօլօփեան—35 ր., ամուսիններ Աֆրիկեան—15 ր., Վ. Էնֆիաճեան, Ս. Բայտողլեան, Ն. Վարդանաեն, Վ. Ս. Մելիքեան, Բ. Խ. Գէորգեան, Մ. Քալանթարեան 10-ական րուբլի, տիկ. Մ. Կաֆեան—8 ր., Մ. Ա. Գէորգեան, Ա. Ջանփոլադեան, Ս. Մանուէլեան, Վարդազարեան, Ե. Ղորղանեան, №№., Գ. Ի. Բայտողլեան, №., Ի. Շուխնուս, Վ. Վասիլև, Ե. Զարգարեան, Ն. Մարտիրոսեան և Ա. Թադէոսեան—5 ական րուբլի։ Այվազեան, Ս. Մ. Մելիքեան, Ե. Ի. Տէր-Օհանեան, Ս. Ս. Մխիթարեան, Ե. Ս. Տէր-Օհանեան, №№., Վ. Ստեփանեան, Մ. Սուլխանեան, Ա. Նուսնուսեան, Գ. Խունունց, Ն. Զարգարեան, Միրզոյեան, Խուդադեան, №. №., Աղբաշեան, №. №., Ա. Կասկոլեան, Ս. Խօջամիրեան, Ա. Մելիքեան, Մ. Մնացականեան, Ռ. Թադէոսեան և Ս. Խոսրովեան—3-ական րուբլի։

Ա. Գէորգեան, Հ. Աւետիսեան, Կարապետեան, Ներսիսեան, Դ. Դ. Սիմոնով, Ե. Ի. Աբէլով. Մարուքեան, Ա. Շահպարոնեան, Ե. Ամիրաղեան, Ս. Ղամբարեան, Ղ. Տէր-Խաչատրեան, Թ. Պետրոսեան, Ն. Վարդանեան, Սուրգունեան, Քաթանեան. Գ. Բաբալեան, Ս. Պետրոսեան, Շ. Տէր-Սահակեան, Ն. Մաղաթեան, Ս. Զարգարեան և Ա. Արարատեան—2-ական ր.։ Նասիբեան և Աղբաշեան—1 ր. 50 կ., տ. Գէորգեան—1 ր. 20 կ., օր. Լիանոզեանի միջոցով—18*) ր. և Զարգարեան, Ներսիսեան, Գ. Գէորգեան, Ս. Ռոտինեան, Օ. Սարգսեան, Ս. Լաշխեան, Ե. Սօլաշվիլի, Ալաքբէթ, Կ. Բ., № №, №.—, Բաշխամով, №№., Ռոստոմեան, Կլադժէ, Ա. Անտօնեան, Վարդանեան, №№—Գ. Բիբիլաշվիլի, տ. Գ. Շախօվսկայեա, Ե. Վ. Կոստանեան Ա. Ապրեսեան,

*) Ծանօթ. 18 ր. նուիրատուներն են.—Սարգսեան—7 ր., Կ. Լիանոզեան—3 ր., Ե. Աբեան—2 ր., Ա. Հէջուբեան—1 ր., Օթաբեան—2 ր., Վ. Վարդանեան—1 ր., Աւ. Եախկան—1 ր. և Բաղդասարեան—1 ր.։

Վ. Սահակեան, Ս. Միմոնեան, Փ. Զարդեղեան, Ա. Միանսարեան, Մ. Եղիգարեան, Ժ. Զայգէշտեան,—1-ական րուբլի, Գոբելով, №., Գրադժ, Վ. Դացխիլաձէ, Բօրիս—50-ական կոպ:

Ի մէջի այլոց նոյն նպատակով Վարչութիւնը հրաւիրել է անդամներից մի քանիսին խորհրդակցական ժողովներին, ուր արծարծուած են սեփական միջոցներով մի որ և է ձեռնարկութիւն սկսելու հարցը: Սակայն վարչութիւնս մինչև օրս այլ և այլ պատճառներով որոշ եզրակցութեան չէ եկել:

Ամբողջ 1914 թւի ընթացքում Ընկերութիւնը ունեցել է

Մուտք . . . 4763 ր. 02 կ.

Ելք . . . . 4789 ր. 42 կ.

1914 թւի ելքը համեմատելով նախահշւի ելքի հետ՝ մնում է բաց 156 ր: Ցիշեալ բացը Վարչութիւնը պատիւ ունի բացատրելու հետևեալ կերպով. 1. աչքի առաջ ունենալով պատերազմի պատճառով ենթադրելի յառաջացող ծանր պայմանները, Վարչութիւնը գնել է 60 ր. ալիւր, որ անձեռնմխելի պահւում է Ընկերութեան պահեստում: Որբանոց ընդունւեցին ձրիաբար Կենտրոնական Կոմիտէի միջոցով պահեստի զինւորների ընտանիքներից վերոյիշեալ չորս երեխաները:

Վարչութեանս աջակցել են տարիների ընթացքում, ձրիաբար բժշկելով հիւանդ որբերին ատամնաբոյժներ տ. Ս. Ստեփանեան-Բամոյեան, պ. Ա. Կաճկաճեան, բժ. Ս. Միրզոյեան և բժ. Տ. Թադէոսեան: Նոյնպէս աջակցել են սիրով զբօսանքի յաջողութեան, անդամների թիւն աւելացնելուն և նւիրներով տ. Մարիամ Աղաբէշեան, կոյսեր Բերուչեան և Խօջամինասեան, օր. Ովսաննա Տէր-Գրիգորեան, որը ձրիաբար պարապել է երեխաների հետ երգեցողութիւնից: Վարչութիւնս իր խորին և սրտանց շնորհակալութիւնն է յայտնում սրբակրօն կոյսերին, քահ. Ալիխանեանին, վերոյշեալ բժիշկներին և տիկիններին իրանց համակրական վերաբերմունքի առիթով:

# ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ 1914 ԹՒԻՆ

Օր. Բայտողեան Սուսաննա—նախագահ.
Օր. Փուղինեան Աննա—փոխ—նախագահ.
Տիկ. Ալիբէգեան Նունէ
Տիկ. Գէւորգեան Սօֆիա
Տիկ. Խօջամիրեան Սաթենիկ
Տիկ. Պետրոսեան Սաթենիկ
Տիկ. Պսարեան Նունէ—գանձապահ.
Տիկ. Օրբէլի Վառվառէ
Օր. Էնֆիանջեան Վարսէնիկ
Օր. Լիանօզեան Կատարինէ
Տիկ. Թադէոսեան Ռուզալիա—քարտուղար

## Փոխ. անդամներ

Իշխ. Արղութեան Աննա
Տիկ. Էյրանեան Շուշանիկ
Տիկ. Ղամբարեան Մերանուշ
Տիկ. Գէորքեան Աստղիկ
Տիկ. Յովաննիսեան Թամարա
Օր. Տէր Գրիգորեան Ովսաննա

## Վերաստուգիչ Ցանձնաժողովի անդամները

Տիկ. Միլեան Վառվառէ
Տիկ. Կաֆեան Մարիամ
Օր. Նալբանդեան Հայկանուշ.

## Վերաստուգիչ Ցանձնաժողովի փոխ-անդամներ

Կոյս. Բերուչեան Հերմոնիա
Իշխ. Թումանեան Աննա

# ԱՆՒԱՆԱՑՈՒՑԱԿ ՈՐԲԵՐԻ 1914 Թ.

| Որբերի անունները և ազգանունները | I<br>Ե՞րբ են ծնւել | II<br>Ո՞րտեղացի են | III<br>Ե՞րբ են ընդունւել | IV<br>Ո՞րբ է թէ կիսաորբ | V<br>Ո՞րտեղ են սովորում |
|---|---|---|---|---|---|
| 1. Աղախանեան Աւետիս | 1901 թ. 11 մայիսի | Զանգեզուրցի | 1907 թ. մայիսին | Որբ | Ներսիսեան դպրոցում. |
| 2. Աղախանեան Համբարձ. | 1898 թ. 7 մարտի | Զանգեզուրցի | 1907 թ. մայիսին | Որբ | Արհեստաւորաց դպրոցում. |
| 3. Աւետիսեան Արշալոյս | 1897 թ. 8 փետր. | Շուշեցի | 1907 թ. մայիսին | Որբ | Գայեանեան դպրոցում. |
| 4. Աւետիսեան Սիգրակ | 1905 թ. 15 օգոս. | Թիֆլիզեցի | 1911 թ. | Կիսաորբ | Քաղաքային դպրոցում. |
| 5. Բաբայեան Գրիգոր | 1900 թ. 13 օգոս. | Թիֆլիզեցի | 1908 թ. յունւարին | Կիսաորբ | Քաղաքային դպրոցում. |
| 6. Բեբուրեան Գէորգ | 1904 թ. 2 նոյեմբ. | Թիֆլիզեցի | 1911 թ. | Որբ | Քաղաքային դպրոցում. |
| 7. Բաղչեան Թամարա | 1897 թ. 7 ապրիլի | Թիֆլիզեցի | 1910 թ. սեպտեմբ. | Որբ | 3-րդական գիմնազեայում. |
| 8. Գրիգորեան Աստղիկ | 1901 թ. 4 յունիս. | Ախալցխացի | 1909 թ. | Կիսաորբ | Յովնանեան դպրոցում. |
| 9. Դովլաթեան Վաղինակ | 1900 թ. 1 մարտի | Նոր-Բայազետցի | 1908 թ. մարտին | Կիսաորբ | Ներսիսեան դպրոցում |
| 10. Լեոնեան Շաւարշ | 1901 թ. 25 սեպտ. | Պարսկաստանցի | 1907 թ. յունիսին | Կիսաորբ | |
| 11. Կոլոտեան Համասփիւռ | 1898 թ. 8 յուն. | Սարղամիշցի | 1907 թ. յուլիսին | Որբ | Քաղաքային կար ու ձևի դպ. |
| 12. Միրիգոզեան Աստղիկ | 1898 թ. 8 սեպտ. | Թիֆլիզեցի | 1908 թ. յունւարին | Որբ | Յովնանեան դպր. |
| 13. Մաշուրեան Նատալիա } քոյրեր | 1905 թ. | Տաճկաստանցի | 1914 թ. դեկտեմբ. | Որբ | Քաղաքային դպրոցում. |
| 14. Մաշուրեան Մարիամ | 1908 թ. | Տաճկաստանցի | 1914 թ. դեկտեմբ. | Որբ | Քաղաքային դպրոցում. |
| 15. Մաշուրեան Նունէ | 1910 թ. | Տաճկաստանցի | 1914 թ. դեկտեմբ. | Որբ | |
| 16. Մանդակունի Մարգարիտ (վճարով) | 1904 թ. 11 մայիսի | Թիֆլզեցի | 1912 թ. | Կիսաորբ | Քաղաքային դպրոց. |
| 17. Մովսիսեան Արփենիկ | 1902 թ. 14 յուն. | Վանեցի | 1908 թ. յունւարին | Կիսաորբ | Նորաշէնի դպրոց |
| 18. Մելքոյեան Ս. Ովսաննա | 1900 թ. 19 յուն. | Թիֆլիզեցի | 1911 թ. | Որբ | Գայեանեան դպրոց |
| 19. Օհանեան Եւա | 1902 թ. 25 փետր. | Կոդա գիւղից | 1911 թ. | Որբ | Քաղաքային դպրոցում. |
| 20. Օհանեան Հայկանուշ | 1904 թ. 8 սեպտ. | Կոդա գիւղից | 1914 թ. ապր. | Որբ | Քաղաքային դպրոցում. |
| 21. Սարգսեան Մամիկոն | 1899 թ. 20 մայիս. | Ախալցխացի | 1907 թ. մայիսին. | Որբ | Արհեստաւորաց դպրոցում |
| 22. Սուլթանեան Անահիտ | 1903 թ. 6. սեպտ. | Թիֆլիզեցի | 1909 թ. | Որբ | Քաղաքային դպրոցում |
| 23. Սեւուկեան Արտեմիս | 1901 թ. 24 օգոստ. | Թիֆլիզեցի | 1909 թ. | Որբ | Քաղաքային դպրոցում. |
| 24. Սիմոնեան Շուշանիկ | 1904 թ. 8 սեպտ. | Թիֆլիզեցի | 1914 թ. ապրիլին | Որբ | Քաղաքային դպրոցում. |
| 25. Յարութիւնեան Աստղիկ | 1898 թ. | Ալեքսանդրապոլ. | 1907 թ. մայիսին | Որբ | Քաղաքային կար ու ձևի դպ. |
| 26. Նալբանդեան Սաթենիկ | 1902 թ. 3 մարտի | Թիֆլիզեցի | 1909 թ. | Որբ | Քաղաքային դպրոցում. |
| 27. Ղարագեօզեան Կարապետ | 1897 թ. 8 յուն. | Ախալցխացի | 1907 թ. յունւարին | Կիսաորբ | Ներսիսեան դպրոցում. |
| 28. Խաչատրեան Արուսեակ | 1907 թ. 26 փետր. | Թիֆլիզեցի | 1913 թ. նոյեմբ. | Որբ | Քաղաքային դպրոցում. |
| 29. Տէր-Խաչատրեան Սիրան. | 1907 թ. 3 յուն. | Ալեքսանդրապոլ. | 1914 թ. յունւարին | Կիսաորբ | |
| 30. Փիլիպոսեան Աբգար. | 1899 թ. 20 մայիսի | Թիֆլիս'ցի | 1907 թ. մայիսին | Կիսաորբ | Արհեստաւորաց դպրոցում. |
| 31. Զարչեան Արուսեակ. | | | | | |
| 32. Տէր-Աբրահամեան Տատեանա. | | | 1914 թ. սեպտ. | Պահեստի զինուոր-ների ընտանիք. | Քաղաքային դպրոց. |
| 33. Տէր-Աւետիսեան Շողակաթ | | | | | Քաղաքային դպրոցում |
| 34. Լալաեան Մարտին. | | | | | Քաղաքային դպրոցում |

Ծանօթ. 1914 թ. վերջի ամիսներին որբանոցում խնամւում էին 32 երեխայ.

## ՄՈՒՏՔ ԵՒ

*1913 Թւի յունուարի 1-ից*

| ՄՈՒՏՔ | Իսկական | | | | Նախա-հաշիւ 1914 Թ |
|---|---|---|---|---|---|
| Անդամավճարներ իսկական անդամ . | 1080 | — | | | |
| Օժանդակող անդամներից . . . . . | 61 | | | | |
| Ապաոիկներից . . . . . . . . . | 117 | | 1258 | | 1200 |
| % 1913 Թւի ընթացիկ հաշւից . . . | | | 90 | 31 | 90 |
| Վեհափառ Կաթողիկոս Գէորգ V-ից որբ Մարգարիտ Մանդակունու վճար . . | 180 | – | | | 180 |
| Որբ Տէր-Խաչատրեանի վճար օր. Կ. Ղազարեանից . . . . . . . . | 30 | — | | | 120 |
| Որբ Թամարա Բաղչեանի վճար 1913 Թւի . . . . . . . . . . . | 26 | — | | | |
| Քոյրեր Մկրտումեանների վճար . . | 84 | – | 365 | — | |
| Քաղաքային կենտրոնական կոմիտէից նրա միջոցով ընդունւած 4 երեխաների սկզբնական ծախսերի համ. | | | 100 | – | |
| Նւիրատւութիւններից . . . . . . | | | 2098 | 20 | 1403 |
| Զբօսանքից . . . . . . . . . . | | | 332 | 29 | 1000 |
| Ընկ. սեփական տան եկամուտ . . | | | 519 | 22 | 540 |
| Ընդամենը . . . | | | 4763 | 02 | |

## ԵԼՔ

*1914 Թւի յունուարի 1-ը*

| ԾԱԽՍ | Իսկական | | | | Նախա-հաշ'ւ. 1914 Թ. |
|---|---|---|---|---|---|
| Ռոճիկ կառավարչուհուն և աշխատողներին . . . . . . . . . . . | | | 412 | 88 | 460 |
| Դիւանական և ..պագրական . . . . | | | 60 | 65 | 80 |
| Որբերից երեք մեծ տղաների վճար . | | | 421 | 83 | 468 |
| Լուսաւորութիւն և վառելիք . . . . | | | 271 | 64 | 230 |
| Դեղօրայքի . . . . . . . . . | | | 76 | 71 | 50 |
| Ուսման վարձ և դասական պիտոյք . | | | 171 | 33 | 125 |
| Իրեղէնի և սապօն . . . . . . . | | | 46 | 55 | 70 |
| Հագուստեղէնի . . . . . . . . | | | 482 | 57 | 500 |
| Մանր ծախս . . . . . . . . . | | | 171 | 35 | 140 |
| Անակնկալ . . . . . . . . . . | | | 37 | | 100 |
| Մթերքներ: Հաց . . . . . . . . | 571 | 40 | | | |
| Միս . . . . . . . . . . | 334 | 61 | | | |
| Կաթ . . . . . . . . . . | 127 | 84 | | | |
| Շաքար, Թէյ . . . . . . . | 158 | 51 | | | |
| Իւղ, պանիր, ձաւար և այլն . | 418 | 27 | | | |
| Ամօրեայ մանր ծախս . . . . | 176 | 21 | 1791 | 84 | 1500 |
| Սեփական տան ծախսեր . . . . | — | — | | | |
| Քաղաքային Վարկի ընկ. 1913 Թ. . | 92 | 90 | | | |
| Քաղաքային Վարկի ընկ. 1914 Թ. . | 177 | 04 | | | 178 |
| 3000 % Թաղէոսեաններին . . . | 150 | — | | | 150 |
| Ջրի ծախս . . . . . . . . . | 81 | 39 | | | 60 |
| Տուրքեր (казен., оцѣн., земс.) . . | 28 | 99 | | | 28 |
| Страхованіе дома . . . . . . . | 14 | 14 | | | 14 |
| Դռնապան և աղբ Թափողի . . . . | 183 | 16 | | | 192 |
| Տան նորոգութիւններ և մանր ծախս. | 77 | 45 | 805 | 07 | 250 |
| Ընդամենը . . . | | — | 4789 | 42 | |

## Ընկերութեան միջոցները
### 1914 թուի յունուարի 1-ից 1915 թուի յունուարի 1-ը

| ՄՈՒՏՔ | Ռուբ. | Կոպ. | Ռուբ. | Կոպ. |
|---|---|---|---|---|
| 1914 թւին . . . . . . | 4763 | 02 | | |
| Մնացորդ 1913 թ. . . . . . | | | | |
| Ընթացիկ հաշւով . . . . . | 1529 | 14 | | |
| Գանձապանի մօտ . . . . . | 711 | 66 | | |
| Ընդամենը . . | 7003 | 82 | | |

| ԵԼՔ | Ռուբ. | Կոպ. | Ռուբ. | Կոպ. |
|---|---|---|---|---|
| 1914 թւին ծախսած է . . . | 4789 | 42 | | |
| Ընթացիկ հաշւով . . . . | 1669 | 17 | | |
| Գանձապանի մօտ . . . . . | 545 | 23 | | |
| Ընդամենը . . | 7003 | 82 | | |

## Հաշուեկշիռ
### 1915 թ. յունուարի 1-ը

| ԱԿՏԻՒ | | | | |
|---|---|---|---|---|
| Քաղաքային Վարկի Ընկերութ. պայմ. ընթաց. հաշւով . . . | 1669 | 17 | | |
| Գանձապանի դրամարկղում . . | 545 | 23 | | |
| Անշարժ կայք . . . . | 17710 | 81 | 19925 | 21 |

| ՊԱՍՍԻՒ | | | | |
|---|---|---|---|---|
| Քաղաքային Վարկի Ընկեր. պարտք . | 2741 | 86 | | |
| Մասնաւոր պարտք . . . . | 3120 | | 5861 | 86 |
| Ընկերութեան միջոցներ . | | | 14063 | 35 |

## Նախահաշիւ ընկերութեան 1915 թուի

| ՄՈՒՏՔ | ռուբ. | կոպ. | Ռուբ. | կոպ. |
|---|---|---|---|---|
| Անդամավճարներ . . . . | 1217 | | | |
| Թիֆլիսի Քաղաքային Ինքնավար. . | 100 | | | |
| 1914 թւի ընթացիկ հաշւի % . . | 63 | | | |
| Վեհափառ Կաթողիկոս Գէորգ V-ից որբ Մարգարիտ Մանդակունու վճար . | 180 | | | |
| Տիկ. Ն. Գասարեանից մի որբի վճար ի յիշատակ իր որդու Ա. Խ. Գասարեանի | 180 | | | |
| Գ. Թիրուխեանից երեք որբ Մաշուրեանների վճար. . . . | 540 | | | |
| Ներկայացումից և զբօսանքից . . | 1000 | | | |
| Սեփական տան եկամուտից . . | 520 | | | |
| Նուիրատուութիւններ . . . | 1000 | | | |
| Ընդամենը . . | 4800 | | | |

| ԵԼՔ | Ռուբ. | Կոպ. | Ռուբ. | Կոպ. |
|---|---|---|---|---|
| Ռոճիկ կառավարչուհուն . . . . | 240 | | | |
| Խոհարարուհուն . . . . . . . | 144 | | | |
| Որբերից երկու. մեծ տղաների վճար . | 348 | | | |
| Դեղօրայքի . . . . . . . . . | 60 | | | |
| Ուսման վարձ և դասական պիտոյք . | 180 | | | |
| Դիւանական և տպագրական . . . . | 70 | | | |
| Վառելիքի և լուսաւորութեան . . . | 300 | | | |
| Հագուստեղէնի . . . . . . . | 550 | | | |
| Իրեղէնի և սապոնի . . . . . . | 50 | | | |
| Մթերքների . . . . . . . . | 1685 | | | |
| Մանր ծախս . . . . . . . . | 170 | | | |
| Անակնկալ ծախսեր . . . . . . | 50 | | 3847 | |
| Տան ծախսեր . . . . . . . . | | | | |
| Քաղաքային Վարկային Ընկ. . . . . | 180 | | | |
| 3120 ր. (ման. պարտքի) % . . . . | 247 | | | |
| Տան նորոգութիւնների . . . . . | 230 | | | |
| Ջրի ծախս . . . . . . . . . | 70 | | | |
| Դռնապանի և աղբ թափողի . . . . | 132 | | | |
| Домовая книга և ուրիշ մանր ծախսեր | | | | |
| Գնահատական տուրքեր . . . . . | 40 | | | |
| Казенный и земскій . . . . . . | 40 | | | |
| Страхованія . . . . . . . . . | 14 | | 953 | |
| Ընդամենը . . . | | | 4800 | |

Հայուհեաց Որբախնամ ընկերութեան Վերստուգիչ Յանձնաժողովի զեկուցագիրը 1914 թ.

Վերստուգիչ Յանձնաժողովի անդամները տիկ. Վ. Միլեան, կոյս Հերմինէ Բերուչեան, օր. Հ. Նալբանդեան. և իշխ. Ա. Թումանեան ստուգելով Ընկերութեան ելմուտից հաշիւը և համեմատելով փաստաթղթերի հետ, գտան, որ հաշիւները պահւում են կանոնաւոր և համապատասխանում են փաստաթղթերին։

Վերստուգիչ Յանձնաժովի անդամներ՝

Վ. Միլեան
Իշխ. Ա. Թումանեան
Կոյս Հ. Բերուչեան
Հ. Նալբանդեան

# Отчетъ

## Общ. Призр. Сиротъ Армянъ Закавказья

За 1914 г.

## Приходъ и расходъ

Отъ 1-го января 1914 года по 1-ое января 1915 года.

| Приходъ | Дѣйствительный Руб. | К. | Руб. | К. | По смѣтѣ Руб. | К. |
|---|---|---|---|---|---|---|
| Взносъ дѣйствительн. членовъ . | 1080 | – | | | | |
| Членовъ соревнователей . | 61 | | | | | |
| Долгъ нѣсколькихъ членовъ. . | 117 | – | 1258 | – | 1200 | |
| % съ текущаго счета за 1913 г. | | | 90 | 31 | 90 | |
| Отъ Католикоса Всѣхъ Армянъ Геворка V за дѣвочку Мандакуни | 180 | – | | | 180 | |
| За пансіонъ Теръ Хачатуровой отъ Клавдіи Казаровой . . . | 30 | — | | | 120 | |
| За пансіонъ Т. Бахчіевой за 1913 г. | 26 | – | | | | |
| За пансіонъ 2-хъ Мкртумовыхъ . | 84 | – | 365 | – | | |
| На первое обзаведеніе 4-хъ дѣтей запасныхъ отъ Центр Город. Ком. | | | 100 | - | | |
| Псжертвованія . . . | | | 2098 | 20 | 1403 | |
| Съ гулянія . . . . | | | 332 | 29 | 1000 | |
| Доходъ съ дома общ.-ва . . | | | 519 | 22 | 540 | |
| Всего . . | | | 4763 | 02 | | |

| Расходъ | Дѣйствительный Руб. | К. | Руб. | К. | По смѣтѣ Руб. | К. |
|---|---|---|---|---|---|---|
| Жалованья надзират. и служащимъ | | | 412 | 88 | 460 | |
| Канцелярскіе и типограф. . . | | | 60 | 65 | 80 | |
| За пансіонъ 3 хъ старш. мальчиковъ | | | 421 | 83 | 468 | |
| Освѣщеніе и отопленіе. . . | | | 271 | 64 | 230 | |
| Лѣкарство . . . . . | | | 76 | 71 | 50 | |
| Учебн. пособія и за правоученіе . | | | 171 | 33 | 125 | |
| Обзаведеніе . . . . | | | 46 | 55 | 70 | |
| Окопировка . . . . . | | | 482 | 57 | 500 | |
| Мелкій расходъ . . . . | | | 171 | 35 | 140 | |
| Непредвидѣнный . . . . | | | 37 | | 100 | |
| Продовольствіе: Хлѣбъ . . . . . | 571 | 40 | | | | |
| Мясо . . . . . | 334 | 61 | | | | |
| Молоко . . . . . | 127 | 84 | | | | |
| Сахаръ и чай . . . . | 158 | 51 | | | | |
| Крупа, сыръ и др. . . . | 418 | 27 | | | | |
| Ежедн. мелкій расходъ . . | 176 | 21 | 1791 | 84 | 1500 | |
| Расходъ по дому . . . | | | — | — | | |
| Въ Тиф. Гор. Кредитное О-ва за 1913 г. . . . . . | 92 | 90 | | | | |
| Въ Тиф. Гор. Кредитное О-ва за 1914 г. . . . . . | 177 | 04 | | | 178 | |
| % за 3000 р. по втор. закладному | 150 | | | | 150 | |
| За воду . . . . . | 81 | 39 | | | 60 | |
| Налоги государ. и земскій . . | 28 | 99 | | | 28 | |
| За страхованіе дома . . . | 14 | 14 | | | 14 | |
| Дворнику и мусорщику . . | 183 | 16 | | | 192 | |
| Починка и мелкій расходъ . . | 77 | 45 | 805 | 07 | 250 | |
| Всего . . | | — | 4789 | 42 | | |

## Средства Общества

Отъ 1-го января 1914 г. по 1-ое января 1915 г.

| Приходъ | Руб. | К. | Руб. | К. |
|---|---|---|---|---|
| Въ 1914-мъ году получено . . . | 4763 | 02 | | |
| Остатокъ съ 1913-го года на текущемъ счету . . . | 1529 | 14 | | |
| У казначея . . . . . . | 711 | 66 | | |
| Всего . . | 7003 | 82 | | |

| Расходъ | Руб. | К. | Руб. | К. |
|---|---|---|---|---|
| Въ 1914-омъ году изъ расходовано. | 4789 | 42 | | |
| На текущемъ счету . . . . | 1669 | 17 | | |
| У казначея . . . . . . . | 545 | 23 | | |
| Всего | 7003 | 82 | | |

## Балансъ на 1-ое января 1915 г.

| Активъ | Руб. | К. | Руб. | К. |
|---|---|---|---|---|
| Тиф. О-во Вз. Кред. усл. т. сч. | 1669 | 17 | | |
| Касса у казначея . . . . . | 545 | 23 | | |
| Недвижимое имущество . . . . | 17710 | 81 | 19925 | 21 |

| Пассивъ | Руб. | К. | Руб. | К. |
|---|---|---|---|---|
| Тиф. Гор. Кред. О-во по ссудѣ дома. | 2741 | 86 | | |
| Частный долгъ . . . . | 3120 | | 586 | 86 |
| Состояніе Общества . . . . | | | 14063 | 35 |

# Смѣта Общества на 1915-ый годъ.

| Приходъ | Руб. | Коп. | Руб. | Коп |
|---|---|---|---|---|
| Членскіе взносы | 1217 | | | |
| Отъ Тиф. Город. Управы | 100 | | | |
| % съ текущаго счета за 1914 г | 63 | | | |
| От Католикоса Всѣхъ Арм. Геворка V | 180 | | | |
| Отъ Н. Х. Псаровой за степендіаннта въ помять А. И. Псарова | 180 | | | |
| Отъ г. Тибухяна за 3-хъ дѣвочекъ Мушурьянъ | 540 | | | |
| Со спектакаля и гулянія | 1000 | | | |
| Доходъ съ дома О-ва | 520 | | | |
| Пожертвованія | 1000 | | | |
| Всего | 4800 | | | |

| Расходъ | Руб. | Коп | Руб. | Коп. |
|---|---|---|---|---|
| Жалованье надзирательн. | 240 | | | |
| „ кухаркѣ | 144 | | | |
| За пансіонъ двухъ взр. мальчиковъ | 348 | | | |
| Лѣкарство | 60 | | | |
| Учеб. пособія и за провоучение | 180 | | | |
| Отопленіе и освѣщеніе | 300 | | | |
| Канцелярскій типограф. | 70 | | | |
| Окопировка | 550 | | | |
| Обзаведеніе | 50 | | | |
| Продовольствіе | 1685 | | | |
| Мелкій расходъ | 170 | | | |
| Непредвидѣнный | 50 | | 3847 | |
| Расходъ по дому | | | | |
| Въ Тиф. Город. Кредит. О во | 180 | | | |
| % на 3120 руб. (частный долгъ) | 247 | | | |
| Ремонтъ дома | 230 | | | |
| Вода | 70 | | | |
| Дворникъ и мусорщикъ | 132 | | | |
| Домовая книга и др. мелкій расходъ | | | | |
| Оцѣночный налогъ | 40 | | | |
| Казеный и земскій иалоги | 40 | | | |
| Страховой | 14 | | 953 | |
| Всего | | | 4800 | |

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| Կամեր Իւնկեր Իշխ. Բ. Ն. Արղութեան-Երկայնաբազուկից | 100 |
| Տիկին Ս. Միրաքեանից | 20 |
| Ամուսիններ Աղբաշեաններից | 8 |
| Ն. Գ. Սունդուկեանից | 8 |
| Լիբոմիրսկայա Լ. Ն. | 3 |
| Բժիշկ. Գասպարեանից | 50 |
| Տիկ. Ծ. Աբիեանից | 25 |
| Պ. Ի. Կ. Վարդանեանից | 30 |
| Թիֆլիսի Ժողովարանի Աւագների Խորհրդից | 75 |
| Պ. Արղութեանից հանգուցեալ Տարեցիվեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն | 10 |
| Պ. Գ. Գ. Կուզանեանից ի յիշատակ քրոջ | 50 |
| Տիկ. Ն. օր. Ալիբեկեանից ի յիշատակ մօր Մ. Խատիսեանի | 40 |
| Տիկ. Կ. Զ. Արուլեանից ի յիշատակ քրոջ | 10 |
| Ն. Շադինեանից ի յիշատակ ամուսնու—կոյս իշխ. Խօջա-(միրեա) Մինասեանի միջոցով | 25 |
| Գաբրիլեանից հանգուցեալ օր. Ա. Ղարիբեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն | 10 |
| Հանգուցեալ Ն. Նարիմեանի ընտանիքից ի յիշատակ հօր | 25 |
| Թիֆլիսի ալիւր և հացահատիկ վաճառողներից հանգուցեալ Ա. Նալբանդեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն Մկրտիչ Թայիրեանի միջոցով | 45 |
| Աւետիսեանից ի յիշատակ Սարուխանեանի | 20 |
| Վեհափառ Կաթողիկոս Գէորգ V-ից քրոջ դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն | 40 |
| Իշխ, իշխ. օր. և Դ. Թումանովներից ի յիշատակ իրենց մօր իշխ. Մ. Թումանովի | 15 |
| Տիկ. Ր. Մ. Ալիխանեանից ի յիշատակ քրոջ իշ. Արղութեանի | 20 |

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| Հանգուցեալ Զ. Դ. Գուլուլեանի որդկերանցից ի յիշատակ հօր | 10 |
| Ն. Շադինեանից ի յիշատակ Ա. Քիշմիշեանի | 15 |
| Հանգուցեալ Զ. Դ. Գուլուլեանի որդկերանցից ի յիշատակ իրենց հօր, կոյս Խօջամինասեանի միջոցով | 10 |
| Տիկ. Բալասան Աւետիսեանից մատաղի համար | 10 |
| Իշխ. Ե. Ս. Թումանեանից ի յիշատակ իշխ. Մելանիա Թումանեանի | 15 |
| Ի յիշատակ Կ. Ի. Միրիմանեանի իւր քոյրերից և եղբօրից | 200 |
| №-ից ի յիշատակ հանգուցեալ Կ. Ի. Միրիմանեանի | 20 |
| Պ. Ի. Ե. Պասբեանից Կ. Ի. Միրիմանեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն | 15 |
| Պ. Պաւել Խոսրովից և իւր հրեխաներից Կ. Ի. Միրիմանեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն | 10 |
| Բժիշկ Գ. Պ. Խոսրովեանից և իր կնօջից Կ. Ի. Միրիմանեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն | 10 |
| Պ. Ա. Մելիք-Ազարեանից Կ. Ի. Քալանթարեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն | 100 |
| Հանգուցեալ Մ. Ս. Խատիսեանի կտակի համաձայն տ. Ն. Ի. Ալիբէկեանի միջոցով | 200 |
| Թիֆլիսի Քաղաքային Ինքնավարութիւնից | 100 |
| Թիֆլիսի Վարկային Ընկերութիւնից | 150 |
| Տիկ. Ե. Ս. Միրզոյեանից | 25 |
| №-ից կոյս Բերուչեանի միջոցով | 1 |
| Տիկ. Ն. Տէր-Օհանեանից ի յիշատակ իր մօր Յարութիւնեանի | 25 |
| Ի յիշատակ հանգուցեալ Սարա Իվ. Թումանեանի իւր աղջկերանցից և պ. Ե. Ի. Փուլինեանից | 50 |

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Տիկ. Մարիամ Բեժանբէգ-ից ի յիշատակ իւր աղջիկ Ելենայի . . . . | 60 | |
| Տիկ. Աննա Ի. Ընփէանճեանից . . | 35 | |
| №-ից . . . . . . | 3 | |
| Ծախուած Նուիրած մահճակալից . . . | 1 | 50 |
| Վ. Արշակ Յակոբջանեանի միջոցով հանգանակած | 11 | 70 |
| Եղբ. Բոյեաջեաններից ի յիշատակ իրենց հօր Յովհաննէս Բոյեաջեանի . . . | 50 | |
| Օր. Սուսաննա Բայազըլեանի հանգանակած . | 43 | |
| Հայուհեաց Որբխն. Ընկ. Վարչութիւնից Կ. Ի. Միքիմանեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն . . . . | 15 | |

## ԻՐԵՐՈՎ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Խատիսեաններից մի մեծ հայելի իւր սեղանով։

օր. Ս. Բայազըլեանից բաւական քանակութեամբ զանազան հագուստեղէն, վերմակներ և ամանեղէն։

իշխ. Մ. Մ. Թումանեանից 65 արշին քաթան պատշգամբի վարագոյրների համար և ձմեռւայ ու ամառւայ երեխի զգեստներ։

պ. Տէրեանից մի գառ, Ս. Աբուլեանից մի գառ, Ս. Աբունից գառ և մրգեղէն։

տիկ. Բարխուդարեանից մի գառ, Նունէ Յովհաննէսեանից մի գառ, Ս. Խօջամիրեանից մի հատ ինքնաեռ, վերարկու և պասկա։

Տիկ. Ս. Դիլանեանից մի մահճակալ։

Իշխ. Ա. Թումանեանից հագուստներ։

տիկ. Յովհաննիսեանից 35 կտոր գիրք, երկու պայուսակ, հագուստ և խաղալիքներ։

տիկ. Թաղէոսեանից կրկնակօշիկներ։

տիկ. Միլեանից կրկնակօշիկներ։

տիկ. Զարի Գրիգորեանից մահճակալ, սէտկա, դօշակ բրդից, բարձ, բարձի երես, սաւան, ձմեռւայ վերմակ։

Աւետիսեանից մի հատ մահճակալ, փոքրիկ բարձ, բարձի երեսներ, անձեռոցիկներ, երեսրբիչ, սաւան ժուրնալ և գրքեր։

օր. Փուղինեանից բաւականին քանակութեամբ հագուստեղէն և պասկա։

տիկ. Խօրաւեանից զանազան հագուստեղէն, վերարկու, կրկնակօշիկ և չորս կապոց թէյ։

Մ. Բաղիրեանց զանազան հագուստներ։

տիկ. Ն. Ալիբեկեանից զանազան հագուստներ, գլխարկ և 39 կտոր գիրք։

տ. Դ. Սիմէնովից բաւականին քանակութեամբ հագուստներ

տիկ. Ս. Պետրոսեանից բաւականին քանակութեամբ զանազան հագուստներ։

տիկ. Ջավրիէվից հագուստներ։

տիկ. Վ. Տէր-Գրիգորեանից մի հատ լամպա։

# ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

† Մայրապետ Սրամելիքեան Յեփրոսինէ
† Կոյս Էնֆիանճեան Իսկուհի
օր. Արշալոյսեան Շուշանիկ
պ. Մելիք-Ազարեան Ալեքսանդր
պ. Սուլխանեան Մինաս
տ. Թամամշեան Վարվառէ

Անդամեր տարեկան ռուբլուց աւել վճարողներ.

տիկ. Գէւորգեան Սոֆիա Մ.— 25 ր.
տիկ. Գուլազեան Վարվառէ—25 ր.
պ. Էանֆիանճեան Արտաշէս – 20 ր.
տիկ. Շօյցէ Ելիսաւէտա— 15 ր.

Տարեկան 12 ռուբ. վճարողներ

Տ Աբեան Մարգարիտ.
տ. Աթաբէկեան Աննա
տ. Ալիբէկեան Նունէ
տ. Առաֆելեան Սոֆիա
օր. Առաֆելեան Աննա
տ. Աֆրիկեան Եղիսաբէթ
օր. Բայաղուլեան Սուսաննա
տ. Բեժանբէգ Սոֆիա
տ. Բոզարջեան Սոֆիա
տ. Խօջամիրեան Վարւառէ
տ. Խոսրովեան Նինա
տ. Կաֆեան Մարիամ
տիկ. Կաֆեան Սաթենիկ
տիկ. Միրեան Վարվառէ
† տ. Մրիմանեան Կատարինէ
տ. Միրաքեան Նունէ
տ. Միրաքեան Մարիամ
տ. Մխիթարեան Սուսաննա
տ. Քազարեան Մարիամ
տ. Մելիքեան Սոֆիա

տ. Յարութիւնեան Մարիամ
տ. Պետրոսեան Սաթենիկ
տ. Պետրոսեան Թագուհի
տ Պաւրեան Նունէ
տ Տէր-Աբրահամեան Եղիսաբէթ
տ. Տէր-Սահակեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սաթենիկ

Տարեկան 10 ռ. վճարողներ

տ. Ամբարդանեան Թամարա
տ. Արարատեան Աննա
տ. Գէորգեան Սոֆիա Մ.
տ. Գիւլբէնկեան Զարուհի
տ. Զարգարեան Նունէ
տ. Յովսէփեան Զմրուխտ
տ. Յովսէփեան Եղիսաբէթ
օր. Էնֆիանճեան Վարսենիկ
տ. Խունունց Գայեանէ

Ծանօթ. 1914 թւի անդամացուցակից 40-ից անդամավճար չէ ստացւել:



տ. Ղարաջեան Մարիամ
տ. Ղորղանեան Աննա
տ. Բաղրեան Նինա
տ. Մալեան Աննա
տ. Վարդանեան Աննա
տ. Վարդանեան Նունէ
տ. Տէրեան Նատալիա
օր. Փուղինեան Աննա
տ. Մելիք-Դադայեան Սոֆիա

Տարեկան 6 ռուբ. վճարողներ

Իշխ. Արղութեան Աննա
օր. Աբէլեան Մարգարիտ
տ. Աւետիսեան Հերսիլեա
տ. Աւետիսեան Ոսկի
տ. Առաքելեան Եղիսաբէթ
տ. Ալիխանեան Վարվառէ
տ. Այբաշեան Մարիամ
տ. Ազամալեան Գիւլիզար
տ. Այրէսեան Անահիտ
տ. Ալիխանեան Նունէ
տ. Գասպարեան Նատալիա
տ. Գէորգեան Սոֆիա Պետր.
տ. Գէորգեան Աննա
տ. Գուլեան Աննա
տ. Գէորգեան Նունէ
տ. Դանիէլեան Սրբուհի
տ. Ջօրեան Եղիսաբէթ
Իշխ. Թումանեան Աննա
տ. Խօջամիրեան Սաթենիկ
տ. Խոսրովեան Սոֆիա
տ. Կաֆեան Նունէ
տ. Կրէթեան Ովսաննա
տ. Ղամբարեան Սիրանոյշ
տ. Ղամբարեան Նունէ
տ. Մադաթեան Նատալիա
տ. Մարտիրոսեան Հայկանուշ
տ Մանուէլեան Վերա
տիր. Մատինեան Վարվառէ
տ. Միրիմանեան Նատալիա
տ. Միլեան Մարիամ
տ. Մարութեան Նատալիա

տ. Յովհաննիսեան Դարիա
տ. Շահպարոնեան Դարիա
տ. Ջանադեան Վարվառէ
տ. Սարգսեան Նուարդ
տ. Սարգսեան Օլգա
տ. Սէյլանեան Տիրուհի
տ. Սէյլանեան Վարդուհի
տ. Սիմոնեան Սրբուհի
տ. Վարդանեան Հռիփսիմէ
տ. Տէր Անտոնեան Շուշանիկ
տ. Տէր-Յովհաննիսեան Նատալիա
տ. Տէր-Խաչատրեան Ղումաշ
տ. Փարսադանեան Նունէ
տ. Փօնդոյեան Կատարինէ
տ. Փիթոյեան Նադեժդա
տ. Օրբէլի Վարվառէ
տ. Օրբէլի Ռուսուդանա
օր. Օրբէլի Կատարինէ

Տարեկան 5 ռուբ վճարողներ.

տ. Աբեան Եղիսաբէթ
տ. Ամիրադեան Եղիսաբէթ
Իշ. Արղութեան-Երկայ. Նադեժդա
տ. Բահարթրեան Մարթա
տ. Դարչեան Եղիսաբէթ
տ. Դօլուխանեան Եւգենիա
տ. Դօլուխանեան Եւգենիա
ա. Եղիազարեան Եղիսաբէթ
տ. Զարդեղեան Փեփրոնէ
տ. Թադէոսեան Ռուզալեա
Իշխ. Թումանեան Մարիամ
տ. Խաչատրեան Մարիամ
տ. Խրխրեան Սոֆիա
տ. Խաչատրեան Մարիամ
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Հասան-Ջալալեան Աստղիկ
օր. Հախվերդեան Մաննա
տ. Ղուկասեան Վարվառէ
տ. Ջիթողցեան Աննա
տ. Յովհաննիսեան Նատալեա
տ. Յովհաննիսեան Սուսաննա

տ. Պապովեան Եւգենէ
տ. Սիմոնովա Դարեա
տ. Փուղինեան Նունէ
տ. Տէր-Առաքելեան Եւգենէ
տ. Ցիցիկեան Եփեմիա
տ. Մալեան Կատարինէ
օր. Քալանթարեան Կատար.
օր. Քեանդարեան Շուշանիկ

Տարեկան 4 ր. վճարողներ

տ. Ալեքսանդրեան Ֆլօրա
տ. Գէորգեան Աստղիկ
կոյս. Բիրուչեան Հերմօնիա
կոյս. Խարազեան Շուշանիկ
տ. Ստեփանեան Վարդուհի
տ. Քալանթարեանա Սոփիա
տ. Քալանթարեան Եւգենէ

Տարեկան 3 ռուբ. վճարողներ

Իշխ. Արղութեան Երկայնաբազ. Կ.
տ. Աբեան Կատարինէ
տ. Աբովեան Սիրանոյշ
տ. Բաշբէուգ Մելիքեան Ան.
օր. Բուդաղեան
Իշխ. Բէհբութեան Կատարինէ
տ. Բադրեան Դարեա
կոյս. Գուլուլեան Կատարինէ
տ. Գուլուլեան Նատալիա
տ. Գուրգէնովա Թերեզա
տ. Գրիգորեան Զարի
տ. դաւթեան Գայեանէ
տ. Դաւթեան Հայկան դուխտ
օր. Դարբինեան Շուշանիկ
տ. Զուրաբեան Սոֆիա
Տիր. Զարդեղեան Աննա
տ. Զուրաբեան Սաթենիկ
տ. Էյրանեան Շուշանիկ
տ. Եսայեան Նւարդ
տ. Իվանեան Նունէ
տ. Լիսիցեան Մարիամ
տ. Լիսիցեան Կատարինէ
տ. Լօմիձէ Սիդօնիա
օր. Լիանոզեան Կատարինէ
տ. Խօջամիրեան Գինովաֆէ
տ. Խիթարեան Նադեժդա
տ. Խանգուլեան Նունէ
տ. Խոստիկեան Աննա
տ. Կարաքաշեան Թամարա
տ. Կրասիլնիկեան Եղիսաբէթ
տ. Ղայթմազեան Քեթևան
կոյս. Ղօնեան Հռիփսիմէ
տ. Ղալամքարեան Մարիամ
տ. Ճերմակեան Սրբուհի
տ. Ճշմարիտեան Սաթենիկ
տ. Միրզոյեան Սոֆիա
տ. Միրիմեան Վարվառէ
տ. Մարեան Եղիսաբէթ
տ. Մամուլեան Հռիփսիմէ
օր. Միհրաբեան Հասմիկ
օր. Հախուերդեան Աննա
տ. Իսահակեան Թերեզա
տ. Ցարութիւնեան Երանուհի
տ. Յովհաննիսեան Վարդուհի
տ. Շահազիզեան Մարիամ
օր. Նալբանդեան Հայկանուշ
տ. Ջայզէշտեան Թամարա
տ. Ռոստոմեան Սալոմէ
տ. Ռոտինեան Սոֆիա
տ. Ռեվազեան Վերա
տ. Սուրգունեան Կատարինէ
տ. Սմբատեան Սրբուհի
օր. Սայաթ-Նովա Վարվառէ
Տիր. Սահակեան Վարդուհի
օր. Սուրգունեան Նունէ
կոյս. Վարդանեան Եփեմիա
Տիր. Տարիլեան Շուշանիկ
օր. Տէր-Գրիգորեան Ովսաննա
օր. Տէր-Աբրահամեան Արփե.
տ. Տէր-Ցարութիւնեան Լուսիկ
տ. Տէր-Յարութիւնեան Վարվառէ
տ. Տէր-Օհանեան Կատարինէ
տ. Տօտօեան Անահիտ



տ. Տիգրանեան Նատալիա
տ. Ցուրինեան Մրգարիտ
տ. Տէր-Յովհաննիսեան Եղի.
տ. Տէր-Պօղոսեան Նատալիա
տ. Ցիցիկեան Եփեմիա
տ. Քաթանեան Կատարինէ
տ. Քալանթարեան Վարդուհի
տ. Քալտնթարեան Սոֆիա

Օժանդակող անդամներ

պ. Ա. Էնֆիաճեան-20 ր.
պ. Սուրէնեան Աղէքսանդ
պ. Երգուլեան Ստեփան-6 ր.
պ. Կաֆեան Գաբրիէլ
պ. Ռոտինեան Գաբրիէլ 6 ր.
պ. Աբեան Կարապետ-5 ր.
պ. Փուղինեան Գրիգոր.—
պ. Փուղինեան Լևոն—10 ր.
Տէր-Յով. Ամիրխանեան—3 ր.
պ. Մելիքեան Մայիսէյ—3 ր.
պ. Մ. Հայկազեան Գիր.—3 ր.
պ. Տէր-Առաքելեան
Սմբատ—5 ր.

Ապարիկ անդամավճարներ

Բաշբէուկ Դիլիքեան Աննա 1913 թ. 3 ր.
տ. Գէորգեան Սրբուհի Մ. 1912 թ. 25 ր.
տ. Գէորգեան Սրբուհի Մ. 1913 թ. 25 ր.
տ. Զարդեղեան Աննա 1911 թ. 3 ր.
տ. Զարդեղեան Աննա 1912 թ. 2 ր
Մելիք Հայկազեան Եղիսաբէթ 1913 թ. 6 ր.
Մլիք Հայկազեան Գերասիմ 1913 թ. 3 ր.
Ռոտինեան Սոֆիա 1913 թ. 3 ր.
Տիրուհի Սահակեան Վարդուհի 1913 թ. 3 ր.
Սիմոնեան Սրբուհի 1913 թ. 6 ր.
Տօտեան Անահիտ 1013 թ. 3 ր.
Քանդարեան Շուշանիկ 1913 թ. 5 ր.
Շաւերդեան Եփեմեա 1913 թ. 12 ր.
Ցուրինեան Մարգարիտ 1913 թ. 3 ր.
Օրբելի Ռուսուդանա 1913 թ. 6 ր.
Օրբելի Վարվառա 1913 թ. 6 ր.

## Հայուհեաց որբախնամ Ընկերութեան 1915 թուի Ընդհանուր Ժողովի ծրագիրը·

1) 1914 թուի Ընդհանուր Ժողովի արձանագրութեան ընթերցումը·

2) 1914 թուի Ընկերութեան գործունէութեան ընթերցումը.

3) 1914 թուի հաշուետուութեան ընթերցումը

4) 1915 թուի Նախահաշուի ընթերցումը

5) Ընթացիկ հարցեր

6) Հերթական կարգով դուրս գնացող Վարչութեան անդամների, Փոխ-անդամների և Վերաստուգիչ անդամների ընտրութիւնը։

7) Ընկերութեան կանոնադրութեան փոփոխութիւն և լրացում։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014314